

ԵՐՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կես տարվանը 3 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Կատարեանի խանութում:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի

Tiflis, Fedaxin "Muzak."

PAYS ÉTRANGERS

S'adresser pour les annonces et les abonnements à MM. BOUËT et Co (Office de publicité) 23, rue de la Chaussée-d'Antin.

PARIS.

Գալուս 1875 թվին

"ՄՇԱԿ"

Այլ հրատարակվելիս այն

պարագրամայով

Տարեկան գինը 5 ռուբլ

կես տարվանը 3 ռ:

Բացի խմբագրութիւնից կարելի է գրվել և պ. Ծատուրեանցի խանութում:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Զգոյշ կենանք. — Ներքին տեսութիւն: Միթէ կարող ենք անտարբեր մնալ: Մշակիս գործունէութիւնը: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: — Ցայտարարութիւններ:

ԶԳՈՅՇ ԿԵՆԱՆՔ

I

Ընտրութեան օրը հասաւ... Վարդաբի ընտրութիւնը բաժանված են երկը բաժնի վրա, նայելով թէ ինչ չարքով նրանք հարկ են մտնում քաղաքային վարչութեան մէջ: Իւրաքանչիւր բաժնիւր պէտք է ընտրել 24 մարդ ձայնաւոր, իսկ այդ 72 ձայնաւորները պէտք է ընտրեն քաղաքապետին:

II

Այլքեր են կազմում ամեն քաղաքի ուրեմն և մեր Թիֆլիսի բնակիչների բազմութիւնը, — աշխատող, խնայող, իրանց քրահնգով ապրուստը ձարող, ստորին և միջին դասերը զանազան պարագրամայների:

Արանց համար գլխաւորապէս նշանաւոր է ունենալ մի բարեկեցի՞ք քաղաքային վարչութիւն, որ նրանց ամենամահճեղէն պիտոյքները վրա կը հոգայ:

III

Մի բան երբեք չը պէտք է մոռանալ, այն է, որ ունեւոր մարդիկը ընտրութիւններին մասնակցելով, բոլորովին տարբեր նպատակներ կարող են ունենալ քան թէ արուեստաւոր, միջին առևտրական, մի խօսքով իրանց աշխատանքով ապրող և իրանց աշխատանքից հարկ վճարող զանազանը...

IV

Գլխաւոր ոյժը կայանում է երկը ընտրական բաժանմունքներից, — թէ և նա ամենափոքրութիւն է, — առաջին բաժանման վրա, որովհետև ամեն տեղ և մասնաւոր մեզանում արուեստաւորների և մանր վաճառականների դասը կապիտալիստների ազդեցութեան տակ են գտնվում, կախված լինելով գուժամարի ազդեցութիւնից:

V

Մեր հարուստների համակրութիւնը, որոնց մեծ մասը ոչ թէ ձշմարիտ աշխատանքով և կապիտալիստական շահնյնելով են ապրում, այլ զանազան պարագրամայներով:

կապալն եւրոպական այլ տեսակ դործերով, մեր հարուստների համակրութիւնը, առաւել կը լինի անպատճառ մի որ և է շքեղ կեանք վարող, հարուստ մարդու կողմը, որ բոլորովին չէ կարող ըմբռնել ժողովրդի ամենատեսչութեան պահանջները:

VI

Եթէ, ինչպէս ասում ենք ներկայ համարի ներքին տեսութեան ապագծ յօդվածի մէջ, քաղաքային վարչութեան գլխաւոր պաշտօնը պէտք է լինի խնայող ու թիւն, խնայողական քաղաքային տնտեսութիւն, — այն ժամանակ մեր հարուստներից ընտրելով ձայնաւորներին բազմութիւնը և քաղաքապետին, դժուար թէ կունենանք այդ խնայողական տնտեսութիւնը:

VII

Մեր հարուստների դասը կազմված է երկու մասից՝ ազնուականներից և հարստացած վաճառականներից: Առաջին տեսակի հարուստների մեծ մասը մեղանում յայնպիսի են իրանց շտաբութեամբ, անխնայողական անտեսութեամբ, իրանց կայքերի անտեսաբար կառավարելու անընդունակութեամբ: Երկրորդ տեսակի մեր հարուստները նշանաւոր են այն բանով թէ շատ մեծ ձգտողութիւն ունեն գեղարվեստի վարչական գործերը, ինչպէս ռուսերին ասում են՝ на фарты, զանազան պարագրամայներով են զբաղված և առ հասարակ անհաստատ ձեռնարկութիւններով, յոյց տալով արտաքուստ շքեղ և ունեւոր դրութիւն, բայց խտապես խեղդված են շատ անդամ պարարեի մէջ... Միթէ կարելի է յանձնել քաղաքի գործերի անտեսական կառավարութիւնը այն անձերին, որք իրանք սովոր չեն տնտեսական խնայողութեանը:

VIII

Թող մտածեն այդ բանի վրա ընտրողները, թող զըշշ լինին: Թող մտածեն այդ բանի վրա և երբ որ դ բաժանման ընտրողները և երբ որ դ բաժանման ընտրողների մի մասը, որք կազմում են քաղաքի աշխատող, խնայողական ազգաբնակչութեան մասը: Թող մտածեն թէ աւելի լաւ չի լինի արդեօք ընտրել թէ ձայնաւորներին մեծ մասը, թէ քաղաքապետին աշխատող, խնայողական զանազան, որոնց աւելի թանկ է մեր ամբողջ բարեկեցութիւնը, քան թէ մեր հարուստներին...

Օգոյշ կենանք...

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻԹԷ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՆՏԱՐԲԵՐ ՄՆԱԼ

Վարդաբային նոր վարչութեան ընտրութիւնների օրը հասաւ, — միթէ կարող ենք անտարբեր մնալ: Թէ ովքեր կընտրվին ձայնաւորներ, ով կընտրվի քաղաքապետը...

Նախ քան մտածելինք թէ ում վրա կընկնի վիճակը, նախ քան գնայինք բուհարկու, — մեկնելը մեզ թէ ինչ պէտք է լինի քաղաքային վարչութեան պաշտօնը, ինչ պէտք է լինի մեր ընտրվածների պարտաւորութիւնը:

Վարդաբային վարչութիւնը պէտք է հոգայ քաղաքի բարեկարգութեան մասին, նա պէտք է հոգայ բնակիչների բարեկեցութեան մասին:

Այդ է կանոնադրութեան զօրութեամբ նրա

խմբագրատանը բաց է առաւօտեան 9—12 ժամ (բացի կիրակի և սուր օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լիզվով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից մի կոպէկ:

պարտաւորութիւնը: Թէ և հշտ հասկանալի է, որ այդ է քաղաքային խմբագրութեան պարտաւորութիւնը, բայց պէտք է խոստովանա՞ծ, որ այդ պարտաւորութիւնների կատարելը իրականութեան մէջ այդքան հշտ չէ: Պէտք է յիշել, որ այն մարդիկ, որոնց մենք կընտրենք, բացի ազնու լինելուց, պէտք է և բաւական հմտութիւններ ունենան թէ տնտեսական, թէ կառավարչական կողմից:

Տէրութիւնը կառավարում է ամբողջ պետութիւնը, քաղաքային վարչութիւնը կառավարում է մի քաղաքի գործերը, մասնաւոր մարդ մի մասնաւոր ձեռնարկութիւնը, զիցուք մի գործարան:

Այդ բոլոր կառավարողների իշխանութիւնը, նոցա իրաւունքների ընդարձակութիւնը միմեանցից տարբեր է մինը մեծ կազմակերպութեան կառավարողին է, միւսը փոքր...

Բայց բոլորի կառավարութեան տնտեսական սկիզբը նոյն է՝ ծախսը չը պէտք է գերազանցէ մուտքից, բոլոր ծախսերը պէտք է լինին արդիւնաւոր, չը պէտք է լինին անհաշիւ ծախսեր, և միւս կողմից չը պէտք է լինի գումարների անպէտք վատնումը այնպիսի ձեռնարկութիւնների վրա, որոնց կատարելը վեր է կառավարողի պատասխանատուութիւնից:

Սան ձեռնարկութիւններ, որք սէրութիւնը աշխատում է յանձն չառնել, որովհետև նըրանք թէ և մեծ շահեր են բերում, բայց ուրիշ կողմից, ինչպէս ամեն գործ, որ շատ շահ է բերում, կարելի է նրանցից և մեծ վնասներ կրել: Օրինակ սէրութիւնները յանձն են առնում միշտ փօստ և հեռագիր կառավարիչը, բայց երկաթուղին ուր ուրախութեամբ չեն յանձն առնում:

Նոյնը լինում է և պէտք է լինի մի քաղաքի կառավարութեան վերաբերութեամբ: Սան քաղաքային վարչութեան անհրաժեշտ պարտաւորութիւններ, որք կազմում են կառավարչական, իթէ կարելի է անել, պօլեցիական, բուն քաղաքին վերաբերակ պարտաւորութիւններ, ինչպէս օրինակ քարահատակների, մաքրութեան, կառուցելիքի մասին և այլ հոգսերը, մի խօսքով քաղաքի բարեկարգութեան խնամքը, բացի սորանցից քաղաքի բնակիչներին բարեկեցութեան մասին, սյախքն նրանց առաջին, ամենամահճեղէն պիտոյքների մասին հոգսը՝ առաջին պիտոյքի մթերքի էփանութեան, զիւղազտական հիւանդութիւնների տարածման առաջին առնելու, բազարների հիւնելու, հիւանդանոցներ ունենալու, մաքուր ջուր բնակիչներին տալու հոգսերը... և այլն:

Բայց կան ձեռնարկութիւններ, որք մի քաղաքային վարչութիւն երբեք չը պէտք է յանձն առնէ՝ այդ այն ձեռնարկութիւններն են, որք թէ և մեծ շահեր կարող են խոստանալ, բայց մի և նոյն ժամանակ և մեծ վնաս են ներկայացնում, ուրեմն նրանց յանձն առնելով վարչութիւնը անչափ մեծ պատասխանատուութիւն է առնում իր վրա:

Օրինակ նա պարտաւոր է ջրանցքի իրաւորները յանձն առնել, իսկ քաղաքը զազով լուսաւորելու չը պէտք է ինքն յանձն առնէ: Նա պէտք է փողոցների մասին հոգայ, բայց մի հին թաղի բանքիւր և նոր աներ շինելը՝ մասնաւոր արդիւնաբերութեան գործն է: Այդ չէ նշանակում, որ քաղաք գտնով լուսաւորելու հոգսը քաղաքային վարչութեան

պարտաւորութիւն չէ, — նա կարող է ինքն յանձն չառնել, բայց կօնցէ ստիպող ապ մի ընկերութեան:

Ամեն կառավարութիւն, ամեն վարչութիւն ուրեմն և քաղաքային վարչութիւն պէտք է խնայող լինի, — այդ է պատճառը որ ամեն վարչութեան գլխաւոր յատկութիւնը պէտք է լինի պահպանողական ոգի: Բայց այդ չէ նշանակում թէ նոյն պահպանողական ոգի ունեցող վարչութիւնը չը պէտք է նպատակ առաջադիմութեան և ամեն տեսակ վերանորոգութիւններն, զրդելով մասնաւոր արդիւնագործութիւնը:

Ամեն ծախս որ անում է քաղաքային վարչութիւնը պիտի ծածկվի հարկերով, ուրեմն ամեն նոր ծախսի համար հարկաւոր է հարկեր աւելացնել: Այդ մի սխալ կարծիք է, ստույգ է նշանաւոր քաղաքաանտես Գ. Մօլինարին, որ քաղաքային վարչութիւնը պէտք է յանձն առնէ ամեն տեսակ շինութիւններ, և հրապարակական ձեռնարկութիւններ, ամեն այդ տեսակ անհաշիւ ծախսեր, և մասնաւոր ամեն առիթով պարտահաղէտներ, խնջոյքներ, կոնցէրտներ և ֆէլեթիքները թանկ են նըստում և վերջ ի վերջը էլ ժողովուրդը աշխատող դասն է վճարում այդ բոլոր ծախսերը իր կարողութիւնից վեր հարկեր վըճարելով:

Վարդաբի բնակիչների բազմութեան, աշխատող ամբողջ համար հարկաւոր է անհրաժեշտը, — և այդ մասին պէտք է հոգայ քաղաքային վարչութիւնը: Իսկ օգտաւէտ, և մի և նոյն ժամանակ նիւթագէտ ըլիս ներկայացնող ձեռնարկութիւնները թող մասնաւոր արդիւնաբերութեան առարկայ, կապիտալներին գործ լինին: Թող էլ շահնեն...

Եւ այդ մասնաւոր յանձնարարութիւններն վարչութիւնը կարող է և պէտք է նըպատակ, պէտք է բոլոր ջանք գործ դնէ նրանց յարուցելու և իրաւորութիւնը զրդելու...

Վերջացնելը մեր խօսքը պարնայ պ. Մօլինարին խօսքերով խնայողութիւնը ծախսերի մէջ, ահա ամենաբարձր կանոն քաղաքի կառավարութեան: Միոյն այդ ուղղութեանը հետեւելով, և ոչ թէ բանքելով շինութիւններ, նորերը շինելով, ոչ թէ բազմացնելով ստորին աշխատող դասի վրա ձշող հարկերը, ոչ թէ տալով ձաշիր, խնջոյքներ, սուներ, պարեցնելով ներկայ սերունդը ապագայ սերունդի հաշուով, — որ բնորոշ վարչութիւնը կարող է արժանանալ հասարակական շնորհակալութեան:

Գ. Ա.

ՄՇԱԿԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ

Մշակը՝ անդադար խօսել է իր ընկերացիներին հետ քաղաքային վարչութեան խնդիրների առիթով: Սենք այդանդ չենք կամ մնում յիշել այն մեր բազմաթիւ յօդվածները, որք նուրբամբ լինելով օրական, քաղաքական հարցերին և օգուտներին, քննադատում էին քաղաքային վարչութեան սյա կամ այն կարգադրութիւնը, խօսում էին այս կամ այն օրական հարցի վրա՝ ջրանցքի, զազի լուսաւորութեան, արվեստագործական ուսումնարանի, առևտրական դատարանի, ուսելիղէնների թանգութեան, և այլ այդ տեսակ հարցերի վրա, — այլ կը կամայինք յիշեցնել ընկերացիներն միայն մեր այն յօդվածները, որք պարագրամ են նոր քաղաքային կանոն

նադրութեան մեջնա՛ւ մտցնուիլու խնդրով:

Մեր ծանօթացրինք մեր ընթերցողին քաղաքային կրթնավարութեան գաղափարին հետ 1), ծանօթացրինք նրան ուսուցիչներին կատարողութեան գլխաւոր անասական հիմունքներին հետ 2), ցոյց տարով թէ ինչ արտօնութիւններ ունի քաղաքը նոր կանոնադրութեան զորութեամբ, ինչ են քաղաքային վարչութեան պարտաւորութիւնները, որք ընդհանրապէս բաժանուում են երկու գլխաւոր գործունէութիւններին վրա՝ հոգալ քաղաքի բարեկարգութեան 3) և բնակիչներին բարեկեցութեան մասին 4):

Իսկ ստորինը մենք ցոյց տուինք թէ ինչ պիտի լինի քաղաքային վարչութեան յարաբերութիւնը պոլիցիային հետ, վարչապէս ծանօթացրինք ընթերցողին կանոնադրութեան գլխաւոր կէտերին հետ, որք վերաբերում են քաղաքային ընտրողական իրաւունքին, տպուով մեր յօդագծերից մինի մէջ թէ այս մասին, թէ վարչութեան անասական պաշտօնակատարութեան մասին կանոնադրութեան վերջածամկան համար յօդագծերը 5):

Ստորինը յետոյ մենք շնորհ գաղափարը քննել այդ հարցը և գալու ընտրութիւններին նուիրեցինք մի շարք յօդագծերին, սկսած ներկայ տարվայ յուլիս ամսին 6):

Արևիկ մեր ընթերցողներին ուշադրութեան ենք դարձնում ներկայ համարում յիշված «Մշակի» համարներին վրա, և ինչպէս ենք նրանց նորից ուսումնասիրել այդ համարներին մէջ պարունակվող քաղաքային կանոնադրութեան և գալու ընտրութիւններին վերաբերեալ գրվածները:

ՆԱՄԱԿ ԽՐԲԱԳԻՆ

Թիֆլիս, նոյեմբ. 14

Հասարակ են հարգելի ձեզ հետեւի փաստերը քաղաքային վարչութեան մէջ կազմված ցուցակների մասին. Հաստատ աղբիւրից իմացայ, որ մասնագործը այնքան անկարգ կերպով է կազմել ընտրողական թիւերը, որ աղբարարութեան և հրակէրէի տարածողները հազիւ հաղ կարող են գտնել այն անձանց որք հրաւիրվում են ընտրութիւններին մասնակցելու. Գալիս են մի անդրնային ատումն թէ թիւերը վրա նշանակված ընտրողը վաղուց մնաւ է, զայն են մի ուրիշ անդրը յայտնվում որ մի եղբոր բերումն հրաւիրել, իսկ նրա միւս եղբորը, որ անցեալ ընտրութիւններում արդէն միայն մասնակցում էր, հրաւիրել են բերում է ցուցակների մէջ նրա անունը մտցած է:

Ա. ունի քաղաքում մի կալուածք. քանի մի ամիս սրանից առաջ քաղաքային վարչութիւնը նրանից պահանջել է ապառիկներ մտցնելու հարկեր և մի քանի բոլոր, նա իր ժամանակին մտցրել է. Գանի մի ամիսից յետոյ գալիս են և ասում են թէ սխալվել են, քիչ են նշանակել, թէ Ա. . . էլ պէտք է վճարել. նա յետ է տալիս իր ստացականը, որ աւելացնեն ու էլի բերեն. Բնտրութեան օրը մտնենում է՝ նրանից փող մինչև այժմ չեն պահանջել և չեն էլ մտցրել ընտրողների ցուցակի մէջ, ասելով դուք ապառիկներ ունեք:

Գ. քանի որ ընտրութիւնները լինում էին, միշտ մասնակցել է. նա պատա մարդ է, նա ջուռ է գցել է և Արժրուուց առաջ, և Արժրուու հա-

- 1) Մշակի № 14, 1873 թ.
2) Նոյնտեղ:
3) Փողոցներին խնամելը, մաքրելը, հրապարակական այգիներին խնամքը, ջրանցքներին, անասաքրութեան խողովակներին, կամուրջներին շինելը, փողոցները լուսաւորելու հոգը և այլն:
4) Այսինքն խնամքը բնակիչներին ուսուցողներին է տալիս թիւերը ապահովելու, բազմաբար հիմնելու, զանազան անբաղը դիպվածներին, կրակին, հիւանդութիւններին առաջնա անհետ, սեղանական վնասակարութեան և արուեստագործութեան ինքնատեղու և նրանց պաշտպանելու և այլն:
5) Մշակի № 26, 1874 թ.
6) Տես Մշակի 1874 թ. № 28, 29, 31, 40, 44, և 45:

մար և թուամասի համար. Այժմ բերում են հրաւիրել նրա հօր անունով, որ գուցէ քան տարի է որ վախճանվել է. . . .

Մ. հանցը միշտ մասնակցել է ընտրութիւններին, նա է գլխաւոր իր աւետարական գործի մէջ, իսկ նրա երկու եղբայրները ընկերներ են նրա առուտուրի մէջ, բիլետը նրա անունով է, նա էր միշտ ստանում ընտրողական թիւերը, այժմ նրա երկու եղբայրներին բերումն հրաւիրել մասնակցել ընտրութիւններին, իսկ նրան ոչ. . . .

Որքան այդ տեսակ փաստեր Հաստատ աղբիւրից լսել եմ որ ցուցակները շատ անկանոն կազմված լինելով, շատերը ընտրողներին, թէ առաջին, թէ երկրորդ ու երրորդ րաժանան մէջ, կամենումն ընտրողական ժողովի մէջ պահանջել որ ընտրութիւնները չը կայանան, որովհետև ցուցակները անվավեր են, կամենում են պահանջել որ նոր ցուցակներ կազմվեն և յետոյ լինեն ընտրութիւնները:

Եթէ տեսնեմ որ ուրիշներն էլ այդ բողոքը անում են, ես էլ ուրախութեամբ կը բողոքեմ ընտրողական ժողովի մէջ:

Մի ընտրող

ՆԱՄԱԿ ԽՐԲԱԳԻՆ

Թիֆլիս, 16 նոյեմբ.

Պ. Խմբագիր. Ասում են որ Երոզայանց այն մարդը որ կամենում է որ իրան քաղաքը թէ այլ աղբային վարչութեան մէջ ընտրեն, յայտնում է իր կարծիքը լրագիրներին մէջ, և ստորագրում է իր անունը. նա յայտնում է թէ ինչ համոզմունքներ էր մարդ է, ինչ է խոստանում անել եթէ նրան կընտրեն, ինչ մտքեր կը պաշտպանէ:

Մեզանում այդ սովորութիւնը չը կայ, ես էլ չեմ ձեռք քաշում անունս, բայց կը յայտնեմ միայն կարծիքս. իմ կարծիքով պէտք է այնպիսի մարդիկ թէ գլխաւոր թէ գօլով ընտրեն, որք թողնելով չապրիսեան և քաղաքի արտաքին շքեղութեան համար հարկաւոր ձեռնարկութիւնները, մտածէին նախ և առաջ խեղճ մշակ գասի, արուեստաւորներին, և ամեն տեսակ աշխատողներին համար ամենահարկաւոր բաներին վրա: Մենք օրինաւոր ջուր չունենք խմելու, խտակ ոչ չենք ծծում այդ քաղաքում, — որ միայն մտածելիք զանազան փաստաւոր ձեռնարկութիւններին վրա, ու նրանց վրա փող ծախսելիք: Չէ որ փողերը մէկ տեղից պէտք է գոյանան, իսկ ուրիշ աղբիւր չը կայ, եթէ ոչ աշխատող զանազան վերցնող հարկերը. . . .

Ես որ զլանել զառնամ, խոստանում եմ պաշտպանել միշտ այդ մտքը առաջ մտածելիք ամենահարկաւոր պէտքերին վրա, յետոյ փաստաւորութեան բաներին վրա. . . .

Մինչև հիմայ մեր քաղաքային վարչութիւնը շատ բաներում անզույժ էր չարժուում, շատ անգամ լիսկով գործերին ձեռք էր տալիս, — եթէ այն ժամանակ չը լինէին ձեռք լրագիր ու «Գրօթ-բայի» ղեկավարները, ով է իմանում ինչ փորձանքի մէջ կընկնէինք. . . . էլի մենք աղքատներս պէտք է նրանց սխալումները վճարէինք. . . .

Հարուստի ու աղքատի նպասակները ուրիշ են: Հարուստը միշտ ուղում է էլի հարստանալ, աղքատը կամենում է որ իր օրական կեանքը ապահովված լինի: Նրա համար հարստութիւնը արժէք չունի: Նա չէ մերժում հարկ վճարելը, բայց և չէ կարող իր կարողութիւնից վեր վճարել քաղաքի հարկը ու այնպիսի ձեռնարկութեաններին վրա որ իր համար զին չունեն:

Երբորք բաժանման ընտրող

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ներքին բաժնութեան պատճառով հրատարակում ենք Մշակի աւելորդ կէս թիւերը:

Ուշադրութիւն ենք դարձնում այս համարում հրատարակված մի ընտրողի նամակի վրա, որտեղ պատմվում են քանի մի իրողութիւններ քաղաքային ընտրութիւններին համար կազմված անկանոն ցուցակներին մասին:

Պ. Աղբարդի գրում է մեզ Մօսկվայից՝ Նոյեմբերի 1-ին սկսաւ այստեղ նոր ընտրողական կանոնադրութեան համաձայն ղեկավար մտնելին: Հայերից միայն մէկ անձն անկաւ, բայց նա եւ արեւմտապետներ իր մարմին տեղաբնակցութեան պատճառով:

Նոյն Մօսկվայի թղթակցը գրում է մեզ՝ Նիժնի-Նովո-Նոսովի համարին այրվելու առաջին

լուրը տարածվեցաւ մասնաւոր նամակներով և հաստատվեցաւ երեկոյան օրն հասած «Մշակի» համարով (№ 42): Կարող չեմ չը յայտնել թէ այդ լուրը խորին տրտմութեան մէջ ձգեց տեղացի բոլոր հայերին: Միթէ մեր ազգի ձակապաղին այնպէս է, որ ոչ մի ազգօրուս գործ նորա մէջ հաստատութեան գտանել չը պիտի կարողանայ. . . .

Ընտրողների ուշադրութիւն ենք դարձնում թաղաքային կանոնադրութեան 30-օրը յօդվածի վրա՝ ընտրողական ժողովներում նախագահում է քաղաքապետը: Նրան օգնելու համար, ձայները հաւաքելու և հաշուելու ծանուցակ, թող է տրվում իւրաքանչիւր ընտրողական ժողովին, նախ քան սկսվեն ընտրութիւնները, նշանակել իր շրջանից 2 մինչև 6 անձինք:

Մօզլոկից գրում են մեզ որ քաղաքի հայոց ազգային-հոգևոր դպրոցը, որ 1868 թ. բացվեցաւ, այժմ հնորով դպրոցի հոգաբարձուների անհոգութեան խղճովի դրութեան մէջ է:

Ս. Ելմաճի հիմարանի Բարձրագոյն հաստատված կանոնադրութիւնը տպված է «Պրավ. Եթե» լրագրի № 250 մէջ և նոյնպէս «Մոսկ. Եթե» լրագրում: Միւս անգամ կը տպուի նրա թարգմանութիւնը:

Մենք լսում ենք, որ Ս. Պետերբուրգի երեկի փաստաբան պ. Սպասովը իր հաւատարմութեամբ ստանալով Ս. Պետերբուրգի կրակի դէմ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Առևտրական տուր ԵՂԱՐՑ ԱԼՔՈՒՆՁԱՆ քայցի Թիֆլիսում Արուսի-չատայա անունով աճուրի պահստ սեփական գործարարից Գլխի մէջ:

Սյր առևտրական տուր արգէն 40 ասորի է որ գոյութիւն ունի և 14 տարվայ ընթացքում շարունակ հայթայթում է աճուրը ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՍԵՏՈՒԹԱՆ ԿԱՅՍՐՈՒՆԻ պալատը Լիվադիայում:

Սյր աճուրը, որ մի հոչակ անուն ստացած է ինչպէս ամբողջ Գլխի մէջ, նոյնպէս Օղթայում և արտասահմանում, — Ս. Պալատ և Լիվադիայում, համեմատաբար արժան լինելով Սարատովի պիւրից, մի և նոյն ժամանակ գերազանց է այդ վերջինից իր թէ սպիտակութեամբ և թէ այլ արժանաւորութիւններով:

Օտխմում է իմ պահստի մէջ, Վ. Էլիամին օվսկի փողոցում, Խօսրօ է վիտան նորոգված խնամքների շարքում, թէ օպտով (մեծ քանակութեամբ), թէ սուսնէին պարկերով, իւրաքանչիւրը 5 պուդ կշուով:

3 (5)

Դուրս եկաւ պ. Գաղաթոս Աղայի անցի գրքիցը «ԱՅՅԱԿԱՆ ՀՆՁԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»: Գինն է՝ Ուսաստան 25 կոպ. Թիւրքիս 1 Ֆրանկ: Գինը ցանկացողները թող բարեհաճեն զիմեւ Թիֆլիսում «Մշակի» և «Սեդուի» խմբագրութիւններ, պ. պ. Վարդանանի և Վ. Սիմոնի գրավաճառանոցներ և պ. Երգար Զոյհանիստանին: Այլ է քսան դրա պօլ պ. Գ. Երայնային. Այս աճուրի պ. Գ. Իարիւղարեանին և Ս. Պօլիս «Մասիս» խմբագրութեանը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆ ՅՅՈՒԳՐԱՅ ՄԱՍԻՎՈՒՆՆԱՅԷՆ

Մի բարեգործական նպատակաւ 14 ուրբի արժեքով քանակութիւն Ֆոտոգրաֆիական պատկերներ այժմ հանում եմ 6 ուրբիով, բայց այս սաստիկ աժանութիւն այն անձանց համար միմիայն պիտի լինի, որոնք ձեռք կըբերեն իմ տոմսակներէն, որք պատրաստած եմ տեղոյ քաղաքական գործընտարի թոյլատուութեամբ, տոմսակներին ամէն մի հատ արժէքն է 6 ռ., ամէն մի տոմսակ գինը իւր վճարած փողի փոխարէն ունէ լիովին իրաւունք զիմել իմ Ֆոտոգրաֆիական գործարան հանուել ու պահաւ 6 ռ. արժեքով մի ղիւթին նորաձև ամենաբարձր վիդիանի կարտուզէք և ութ ուրբի արժեքով 1/2 ղիւթին կարեկիճին միմաղբը պատկերներ առանց ոչինչ վճարելի: Երբ տոմսակներս ամէնքն էլ բաժանվին, այն ժամանակ 2000 ռ. պիտի նվիրեմ Տրիֆիայ սուրբ Նիկողեան և սուրբ Գայանեան օրիորդական ուսումնարանաց: Ահա իսկ այս նպատակի համար 14 ռ. արժեքով գործը 6-ի ղիւթողութիւն արած եմ, որ ամէն պատկեր ցանկացողք հեղաթեմամբ բաժանորդ լինեն իմ տոմսակներին, որով կարողանամ կատարել խոստմունքս օգուտ յիշեալ ուսումնարանաց: Ուստի անշուշտ եմ որ առանց ուշադրութիւն չմնայ յայտարարութիւնս:

Օրով առաջ ձեռք կարելի է բերել իմ տոմսակները պ. Ծատուրեանցի լամպի մաղաղիւնում, կամուրջի վրա պ. Արտեանցի մաղաղիւնում, Արժրուու քարվանսարում պ. Աբխալամովի մաղաղիւնում և իմ Ֆոտոգրաֆիայի գործարանում, որ գտնվում է Գլխիցովի փողոցի վրա, Գամոյեանց եկեղեցոյ զիմաց:

4 (5)

ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆՈՒ ՇԻՇ (բուտիլա) 10 ԿՕՊԵԿՈՎ ԿԱՍԵ



Նոյնպէս և այլ տարիներ ամսներ, գործարանի գներով, մեծ քանակութեամբ (օպտով) կարելի է ստանալ Գուարբերի տպուկ գործարանի պահստի մէջ Թիֆլիսում, Գլխիցովի փողոցի վրա, Երժրուու գալբուում, Լիվադիայի կարտուզիւնում № 168. Նոյնպէս ընտրվում են պատուէրներ և զանազան ապակիէրի համար:

17 (20)